Հաշվետվություն

2023 թվականի հունիսի 7-ից 9-ը Ռուսաստանի Դաշնություն (Սոչի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն, Սոչի, հունիսի 7-ից 9-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Եվրասիա. մեր տուն» խորագրով միջազգային ցուցահանդեսին

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - ԱՊՀ անդամ պետությունների գեոդեզիական և քարտեզագրական ծառայությունների ղեկավարների հետ ԱՊՀ խորհրդի գործունեության շրջանակներում միջկառավարական համագործակցության ուղղությունները,
   - ԱՊՀ անդամ պետությունների տարածական տվյալների առցանց հարթակի ստեղծման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքները:

   Ցուցահանդեսին զուգընթաց կազմակերպվել էր «ԱՊՀ անդամ պետությունների տարածական տվյալների ենթակառուցվածքը» թեմայով պանելային քննարկում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Վերոնշյալ միջոցառմանը Կադաստրի կոմիտեն ներկայացրել է կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը: Պանելային քննարկումներին մասնակցել են ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության, Բելառուսի Հանրապետության անշարժ գույքի պետական կոմիտեի, Ուզբեկստանի քարտեզագրական գերատեսչության ղեկավարները, Պետդումայի պատգամավորներ, ինչպես նաև գործարար և մասնագիտական համայնքների ներկայացուցիչներ:

ՌԴ պետական գրանցման, կադաստրի և քարտեզագրության դաշնային ծառայության տաղավարում, որի աշխատանքներին մասնակցության համար հրավիրված էին ԱՊՀ միջպետական խորհրդի անդամ քարտեզագրական-գեոդեզիական ծառայությունների պատվիրակությունները, ներկայացվեցին ԱՊՀ անդամ երկրների տարածական տվյալների էլեկտրոնային հարթակի ստեղծման ծրագրի շրջանակներում ձեռք բերված արդյունքները: Ցուցադրվեցին անդամ երկրների պատմամշակութային արժեքները, զբոսաշրջային ուղղությունները, ներդրումային միջավայրը լուսաբանող էլեկտրոնային հարթակներ:

ԱՊՀ անդամ պետությունների «Տարածական տվյալների ենթակառուցվածքը» խորագրով պանելային քննարկմանը ԱՊՀ անդամ պետությունների քարտեզագրական ծառայությունների ղեկավարները ներկայացրին իրենց երկրներում ոլորտի արդի մարտահրավերները, դրանց հաղթահարման հայեցակարգային և կիրառական մոտեցումները, ինչպես նաև կայացած ենթակառուցվածքի ազդեցությունը տնտեսության և կենսագործունեության այլ ոլորտների վրա: Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը, ընդգծելով տարածական տվյալների միասնական համակարգի կարևորությունը, նշել է, որ վերջինիս ներդրումը հնարավորություն կընձեռի ամրապնդելու գեոդեզիայի, գեոինֆորմատիկայի, կադաստրային գնահատման էկոլոգիայի, հողօգտագործման, տրանսպորտի և այլ ուղղություններով ԱՊՀ անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակման համակարգումը և փոխգործակցությունը, ինչպես նաև կնպաստի տվյալների մշակման և վերլուծության գործընթացների պարզեցմանն ու արագացմանը: Տարածական տվյալների միասնական համակարգը հիմք կհանդիսանա նաև տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման համար, որոնք կարող են նպաստել անդամ երկրների մրցունակության բարձրացմանը: Տեղի են ունեցել գեոպորտալի համատեղ հուշագրի ստորագրման վերաբերյալ քննարկումներ, մասնավորապես կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանը նշել է, որ դրանք տվյալների և ձևաչափի մասով պետք է համապատասխանեն պետությունների կողմից սահմանված ստանդարտներին: Տվյալները չպետք է ֆիզիկապես տեղափոխվեն, այլ պետք է կապակցվեն փոխգործելի համակարգերով:

Միաժամանակ կարևորվեց ԱՊՀ տարածական տվյալների ենթակառուցվածքի գեոպորտալի ճարտարապետությունը իր նպատակին ծառայելու հարցը: Այն միտված է ԱՊՀ անդամ երկրներում մշակված բարձրարժեք, հավաստի և իրավական նշանակություն ունեցող տարածական տվյալների և ծառայությունների որոնման, տարածման, համակարգման և օպտիմալացման հնարավորություն ընձեռող միասնական երկրատեղեկատվական համակարգի ձևավորմանը:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Նստաշրջանի ավարտին մասնակիցները հաստատել են իրենց պատրաստակամությունը ներդնելու բոլոր ջանքերը ԱՊՀ տարածական տվյալների ենթակառուցվածքի ներդրման, էլեկտրոնային հարթակների ինտեգրման և այս ուղղությամբ ակտիվ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվեց շարունակել համագործակցությունը գեոպորտալի մշակման և լրացման աշխատանքների իրականացման ուղղությամբ, ինչպես նաև լիազոր մարմինների միջև խորացնել մասնագիտական փորձի փոխանակումը:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան 13.06.2023 թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 02.06.2023 թ. N 604-Ա որոշում
Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը Ռուսաստանի Դաշնություն քաղաք Սոչի
5. Գործուղման ժամկետները 07.06.2023-09.06.2023թթ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
1. գիշերավարձ,
2. օրապահիկ
3. ճանապարհածախս
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Անուն, ազգանուն 1* | *Անուն, ազգանուն 2* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը **էկոնոմ դաս** | Սուրեն Թովմասյան | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 129.235 | | 129.235 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 113 $ | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 43.763 | | |
| | Օրերի քանակը | 2 | | |
| | Ընդամենը (դրամ) | 87.525 | | 87.525 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 46 $ | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 17.815 | | |
| | Օրերի քանակը | 3 | | |
| | Ընդամենը (դրամ) | 53.445 | | 53445 |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 270.205 | | 270.205 |

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան